ՄԵՂՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԼՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Լրագրիս միջով որևիցե մանաւանդ յայտարարութիւն տալ ավոդը պէտք է վճարել ամէն 4 տող ուի համար 1 կոպէկ արծաթ:

Հրատարակվում է ամէն չարաթ օր, ուի մի թերթ Տարեկան բաժանորդագինն է 7 ռուբլի.

ՅԳ ՏՐԻ — ԴԵԿՏԵՄԲԵՐ 11 1871 — № 45

Ա Զ Գ Ա Յ Ի Ն

Ներսիսեան Ազգային Հոգևոր Դպրոցի Հոգաբարձական ժողովը այս ուսումնական տարուան մէջ ուի քայլ ևս առաջ դրեց: Նա բացի իւր սրդեգիրներն, որոնց պահում է դպրոցի մէջ, որքան սորա միջոցներն ներում են հոգալով նոցա բոլոր պիտոյքը դպրոցից, որոշեց աւելացնելու իւր թոշակառու կարօտ աշակերտաց թիւն ևս և հասցրեց սրանց մինչև տասն և վեց հոգու, որոնք բնակւում են իրանց ծնողաց կամ ազգականաց ու բարեկամաց մօտ և ստանում են դպրոցից իւրեանց, մանաւանդ ուսումնական, պիտոյքը հոգալու համար ամսական հօթն ռուբլի արծաթ: Սոքա ընտրվում են չքաւոր և յառաջադէմ աշակերտներից: Իւրաքանչիւր չորս ամիսը միանգամ, վճռած է, որ ուսուցչաց ժողովի վկայութեամբ լինի վոխոխութիւն սահմանդիրների, եթէ գտնուելու էին նոցա մէջ անարժաններ ստանալու նպաստ ուսումնարանից. և այնպիսիների տեղը պէտք է բռնեն աւելի արժանաւորներն: Սրանով ևս չբաւականանալով հոգաբարձութիւնը ներսիսեան ազգային հոգևոր դպրոցի մատչելիք որոշելու որ դեպքերի դուժար ձեռնարկողը, թղթի, դրչի և մատիանների համար, որոնք պէտք է բաժանվին ընդհանրապէս այնպիսի աշակերտաց, որոնք յիրաւի իրանց միջոցներով չկարողանալով այս կարևոր իրերը ձեռք բերել շատ անգամ սահմանած են իրանց պարապմունքները թերի թողնել: Այսպէս դպրոցը բացի իւր լիակատար որդեգիրներից ունի և երկու կարգ այլ որդեգիրներ ևս, որոնք մանաւանդ վայելում են դպրոցի բարերարութիւնը ուսումնական նիւթերով, բացի այն որ ուսումն բոլորեքեան էլ ձրի են ստանում այնտեղ: Այս դրեթէ միակ դպրոցնէ ազգային դպրոցների մէջ, որ ըստ կարողութեան հոգում է աղքի մանուկների պիտոյքը և նոցա ապագայ աւելի բարօրեալ վիճակի մասին, ուստի և տեղւոյս հայ հասարակութիւնն էլ պարտական է իբրև իւր հարազատ սեպհականութեան վերայ նայելու այս դպրոցին և սրան միջոց տալու օրէցօր աւելի և աւելի բարելաւելու իւր վիճակը. որովհետև սորա յառաջադիմութիւնը նոյն իսկ հասարակութեան բարօրութեան առհաւատչեայն է:

(Կ. Պոլիս. Մասիս Լրագրից)

Երկկ Երեսփոխանական Ընդհ. ժողովն Լ. Ը. Նիսան ըրաւ ի Գալաթիա ընդ նախագահութեամբ Ս. Պատրիարք Հօր, և նկատի ունի նոր կաթողիկոսին ընտրութիւնը վաւերացուց երկար և հանդիսաւոր վիճաբանութենէ մ' ետև, որոյ նպատը խիստ քիչ անգամ սեռնուած է:

Ժամանակն և տեղւոյս անձկութիւնը չներելով այս նշանաւոր նոտին մանրամասն պատմութիւնը սոյն թերթով հրատարակել յառաջիկայ երեքշաբթի աւուր կը թողունք:

Իւակիւտարի Սկլամիկ թաղին մէջ քանի շաբաթէ ի վեր ծագած թաղական վէճը որ այլ և այլ անկարգութեանց և անիշ-

խանական ապօրինութեանց առիթ եղած է, վերջին օրերս ուրիշ դէպք մ'ալ արտադրած է, զոր լրագիրը ոմանք ազգային վարչութեան և Ս. Պատրիարքին դէմ ժողովուրդը գրգռելու նիւթ և պէնք ըրած են:

Քաղին մէջ բնակեալ քանի մ'անձանց մէկ մէկ անատորադիր նամակ երթալով, որոց մէջ մինչև իսկ անոնց կենաց դէմ սպառնալիք եղած են, ասոնցմէ մէկը կենաց վտանգէ վախնալով ոստիկանութեան կը բողոքէ, և ոստիկանութիւնն ալ քննութեան ձեռնարկելով քանի մ' անձինք կը ձերբակալէ:

Ասյս ձերբակալութեանց մէջ ոչ մանուկն Պատրիարքարանը և ոչ կամակցութիւն բայց և այնպէս լրագիրը ոմանք այնպէս հաւատացնել կուզեն թէ վարչութեան թագրիրոնէն եղած են:

Ըստ մեր կարծեաց, եթէ Պատրիարքարանի միջամտութեան արժանի գործ մը կայ, Սկլամբոլի դպրոցին վարժապետներէն մէկուն թշնամիր մէկ նամակն է Ս. Պատրիարք Չօր ուղղած և Օրագրի չորեքշաբթի աւուր թուոյն մէջ ալ հրատարակուած:

Ս. Պատրիարքն ազգին ընտրեալ ղեկավարը լինելով մտանաւորի մը կողմէ անոր պատուոյն եղած անարգանքն ընդհանուր ազգին կը վերաբերի. Հետևաբար, եթէ չենք կարիր, վարչութեան պարտքն է իրրև անդրադարձ ազգային պատուոյն ի գատ կոչել թշնամանիչը և հատուցում պահանջել և եթէ մարիկ չընէ, քաղաքական իշխանութեան դատաստանին յանձնել, ցուցանելու համար թէ ամբողջ ազգի մը պատիւն անհատի մը կրից խաղալիկ չկրնար լինիլ:

Շատ ցաւալի է տեսնել, որ Սալամեզի հայ բնակիչք, որոց մէջ ազգասէր և խոհական անձինք պակաս չեն, իրենց Քադաքին իրաւունքը պաշտպանած ժամանակ ազգին դլխոյն և վարչութեան դէմ եղած անարգանաց աչք կը դոցեն, առանց խորհելու թէ Պատրիարքն և վարչութիւնն ազգինն են, իրենցն է, և անոնց եղած թշնամանքը նոյն իսկ իրենց կը վերաբերի:

Երեքշաբթի աւուր Մասիսի մէջ ՍՈՒՐ ստորագրութեամբ հրատարակուած յօդուածի մը դէմ գէթ խորէն Սրբազան նամակ մը գրկած է մեզ, բայց ձեռնարկիս ուշ հասնելուն համար հրատարակութիւնն յառաջիկայ երեքշաբթի աւուր կը թողունք:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Լուսաւորութեան ստոյգ նշաններին մին ալ ճշմարտութիւնն է:

Տգիտութիւնն է միայն որ առաւել երևակայական մեծութեամբ կշռատնայ քան թէ իրեն իրական վիճակը դիտնալու համար թող կուտայ որ չհատանածը ու իրեն անախորժալի խօսքերն ու ճշմարտութիւնները ճակատին ըսեն: Ճշմարիտ դիտութիւնը առնչաւ է, ու երբոր մտացածնոյց ու ստոյգ պակը դլխէն վար առնես կցաւի, բայց ոչ թէ կորուսած փառացը համար, այլ անոր համար թէ ինչպէս մինչև ցարդ խաբուած է եղեր ու ցնորքը իրողութեան տեղ դրեր: Գիտութեանց ու ուսմանց պարծանքն ալ միշտ այդ եղած է որ փողոցը գտած ճշմարտութեան գոհարքը տարեր ծովուն խորը սուզեր են, որպէս դի աշխատալից ճգնութեամբ անդունդներէն դարձեալ հանեն: Ուստի լուսաւորութեան առաւել մերձեցած պիտի համարուինք և մենք Հայերս երբոր անաչառութեամբ և հանդիստ սրտով ականջ կախենք արդի լուսաւոր ազդերէն ուսումնական ընդունուած այն անձանց խօսքերուն որոնք մեր Հայ ազգին պատմութիւնը քննելով մեղի նոր և զարմանալի լուրեր կուտան, թէ և անոնց բերած տեղեկութիւնքը մեղի անհաճելի իսկ թուին և մեր մինչև ցարդ ունեցած ու սորված հայեցողութեանց հակառակն ալ:

Ե րոպիոյ նորանոր գիտութիւնքը և քննութիւնքը մեր ազգին պատմութեանը համար իրր աղբիւր կընդրկատեն մեծաւ մասամբ և սեպագիր ըսուած գիշատակարաններուն վրայ լրագրի մը տեղւոյն ներածին չափ տեղեկութիւն տալ ու դուցանել անոնց արժանքին ու անոնցմէ ցարդ յառաջ եկած արդիւնքը,—ատիկայ սոյն բանասիրականիս նպատակն է, միանդամայն յուսալով որ շատ անձինք կը դանուին մանաւանդ մեր ազգակիցներէն որոց հայրենեացը մէջ այդ գիշատակարաններն երևան ելած են, որ առանկ մէկ կարևոր կէտի վրայօք մտադրութեամբ իմաստասիրելու կը փափաքին:

Սեպագիր կանուանին ընդհանրապէս այն ամեն հին—արևելեան գրութիւնքը որոնց դիրերը սեպի կամ նետի սլաքի ձևով նշաններ են և որոնք հին ժամանակներն սահն մը բայց ի Սիւրիայէն և փոքր Ասիոյ մէկ մասէն բոլոր արևմտեան Ասիոյ մէջ դործածուած են: Ասոնցմէ կգտնուին Հայաստանի մէջ շատ տեղեր, մանաւանդ վանայ քովերը: Պարսկաստան ալ շատ կգտնուի, և մասնաւորապէս հին աւերակ քաղաքաց պատերուն վրան, դորօրինակ Պերսեպօլիս, Շուշան, Էքպաթանա, Պասարգադ և Պիսութուն:

Սեպագիր գիշատակարանները դիտնականք նախ և առաջ երկու տեսակի կը բաժանեն մին նոր է Արեաց լեզուաւ և դիւրաւ կարդալի, իսկ միւսը հին է Անարեայց լեզուներով, որուն հատականալը դիտնականաց մինչև ցարդ բաւական մտատանջութիւնք ու տագնապք պատճառել է: Սոյն հին և դըժուարիմաց տեսակը կբաղկանայ անանկ սեպերէ կամ սեպերու. բաղադրութիւններէ որ կամ վանկ մը կամ բոլոր իմաստ կնշանակեն այս տեսակը դրուած է հին Քադդեացւոց, Թուրանացի մարաց, Շուշանցւոց, հին Հայոց և Ասորացւոց ոճովը: Իսկ նոր տեսակը որ Արեացը կանուանեն, աթութայից վրան հիմնեալ է և ի կիր առնուած է պարսիկներէն. ասոր դիւրաը հատանականաբար ապայմանեցւոց առնը պատահած է, այսինքն 500 տարի նախ քան գԿրիստոս: Այս տեսակէն որ դիւրաւ կը կարդացուի խիստ քիչ գիշատակարաններ ձեռացեր են, որոնց բայց ի վերայիշեալ պիսութունի ու Սուէզի պարանոցի մէջ դտնուածներէն միւսները մեզի ուրիշ տեղեկութիւն չեն տար, այլ. եթէ Պարսկաց Քադաւորներուն անուն անքը, անոնց գաւառները և քանի մը գովեստք յորմիզդ:

Քննելով հա կացուեր է որ իւրաքանչիւր Արիական մէկ սեպագիր գիշատակարան իրեն հետ և երկիրներու թարգմանութիւն կը կրէ Անարիական ոճով, որ այս երկուքն ձերուն մին Մարաց—Սկիւթականն է, որ Թուրանական լեզուին, իսկ միւսները Ասորականը որ Սեմական լեզուաց բունէն կը վերաբերի: Հիմա Արիական սեպագիր գիշատակարանները որոնք և Եռաբարբառ կը կոչուին մէկ տեղ ժողովելով իմացեր է որ անոնց

մէջ հարիւր և քառասուն յատուկ անուանք կան, որ հարկաւ և Անարիական թարգմանեանց մէջ ալ գտնուելու են, և իրօք ալ գտնուած ու կարգացուած են: Այդ 140 յատուկ անուանց ընթերցումը տեսակ մը բանալի է միւս գոյերն ալ բանալու:

Մեր հայրենիքը գտնուղներուն բոլորն ալ հին ու դժուար տեսակէն է: Մինչդեռ պարսկաց լեզուաւ փորագրուածները ձիշտ այբ ու բենի պէս ամէն մէկ տեպ կամ տեպերու որոշ բաղադրութիւն ձայն մը կը նշանակէ, ու այն ձայներն ու գիրերը ձանաչող մէկը առանց իմաստն ալ իմանալու կարող է զանի կարդալ, ոչ այնպէս են հինգ պէս յիշուեցաւ Հայաստանի մէջ գտնուածները: Հոս մէկ տեպը կամ քանի մը տեպերու բաղադրութիւնը ոչ թէ ա, ե, օ, ք, ս, թ, եայլն կ'նշանակէ, այլ կամ վանկ մը կամ կատարեալ իմաստ մը. այս է անոնց կարգալը այգեալ մինչև անհնարինութեան հասցնող դժուարութիւնը: Բայց բնաւ տարակոյս չկայ որ այժմեան ուսումնականք այդ հազարաւոր տարիներով լուռ ու համր կեցած վկաները խօսեցնել պիտի տան, և անանկ խօսեցնել պիտի տան, որ աշխարհք զարմանայ ու հին պատմիչք իրենց գերեզմաններուն մէջ մէկ անգամ գառնան:

Զարմանալի և միանգամայն դարուս ուսումնական փառքն ու յաղթանակն է թէ ինչպէս սկսուեցան այդ տեպագրերը կարդացուելու: Իսանալի սրամտութեամբ մօտերս այդ յիշատակարաններուն 70 տարի ասկէ առաջ (1802 թուին) 27 տարեկան ուսումնական Գերմանացի մը Գրոտեֆէնտ անունով, և բաւական ատեն քննելէ ու տանջուելէ ետքը գտաւ անոնց մէջ հին պատմութիւններէ ծանօթ պարսիկ թագաւորաց անուանքը ինչպէս Կիւրոս, Գարեհ, Քսերքսէս, Արտաբերքսես և այլն այսչափին տառերն ու ձայները ճանաչելէ զկնի, ուրիշ գիտնականք ղորօրինակ Պիւրնուֆ Կաղղիացին և Լասէն Նորվեկացին շարունակեցին անոր քննութիւնը: Պիսութունի երեւելի տեպագիր արձանագրութիւնքը երեան հանելու պարծանքը անդրիացի Բավլինսոն ուսումնականին կպատկանի, Հայաստանի մէջ գըտնուող տեպագրերը կարդալու մէջ բաւական յաջողած է Գերմանացի Տօքթօր Մօրդման որ գրեթէ շարունակ հոս Փոլիս կը բնակի:

Մեր Հայերուս համար շատ կարևոր է, և խնամ փափաքելի թէ Հայաստանի մէջ գտնուած տեպագրերը ինչ կ'ըսեն: Բայց առանց ոձը դժուար տեսակէն ըլլալով, մինչև ցարդ տակաւին ստոյգ ու անկասկածելի արդիւնք չկայ, ուստի հարկադրուած ենք ալ սպասելու: Սակայն դարձեալ շատ հետաքրքրական է իմանալ որ Պիսութունի յիշատակարանը, ուր որ առաջին Դարեհ իր նուաճած երկրին ցանկը փորագրել տուեր էր նաև մեր ազգին անունը կը կրէ: Իբրև մետասաներորդ գաւառ նշանակուած է Հոն Արմինիա որ անտարակոյս Հայաստանն է, ուսկից և կը հասկացուի թէ արդէն 500 տարի նախ քան Քրիստոս նաև Պարսիկք զմեզ Արմինիայք կոչեր են, թէ մեր Հայկամ Հայաստան բառը ուսկից յառաջ եկած է ասոր վրան տակաւին մեծ մութ կնստի սակայն «Արմինիա» անունը առ ժամանակ մեզի համար ընդունելով կտեսնենք որ բաւական մթութիւններ կփարատին. զորօրինակ երեմիայ Մարգարէի ԾԱ. գլ. 27 համարին եբրայեցերէն բնագրին մէջ գրուած է. Հաշմիւռ ալեհա մամլեխոթ արարաթ մինին վէ աշքենազ. որ ըսելէ թէ կանչեցէք անոր (բաբելոնի) վրան Արարատայ Մինին և Աքանազազի թագաւորութիւնները: Ուսկից կ'հետևի թէ Արարատայ քովերը թագաւորութիւն մ' ալ փնտռելու ենք «Մինին» բառը օտարազգիներէն մեզի տրուած Արմինա ըսօքին երկրորդ մասն է. իսկ »ար» մասին դալով տարիայ թէ Սեմական և թէ Սանսկրիտ լեզուաւ լեռ կ'նշանակէ, որով Արմինիա ալ հետևաբար կրնայ «լեռն Մինինի» նշանակել մանաւանդ որ Դամասկացի Նիկողայոս Հայրապետն ալ կըսէ թէ «Մինին» գաւառ մ'է ի Հայաստան Պարիս կոչուած լեռանը մօտ: Եւ շատ ալ հաւանական է որ Մասիս և Մանաւազկերտ անուանք ալ «Մինինի» հետ յարաբերութիւն ունենան:

Բայց առ ըսենք թէ երբ պիտի դադրինք մեր վրան տիղկութիւնք ուրիշ ազգերէն մուրալու, երբ պիտի մեր մէջէն ալ մարդիկ ու ազդմամբ և արդեամբ աղգասէր անձինք գտնուին, որ բարձր ուսումներու ու գիտութեանց համար ձաշակ ունենան և գիրենք նուիրեն ասանկ ազնիւ և անմահ գործերու. երբ պիտի անգամ մ' ալ Հայու գաւակ մը սուր գրիչը բռնէ. ու վանայ Արմաւիրայ, Յոլակերտի սեպագրերէն հանէ ցուցնէ աշխարհին «Հայ» անունը:

Ա. ԱՄԻՐԽԱՆԵԱՆՑ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՄԻՐԻԿԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ ԱՐԿԱԾՔ ՈՐՍՈՐԴԻ

(ՔԱՋ)

Տեսարանը յիրաւի հետաքրքրական էր: Բոլոր շներն նպատակն էր նորա կախ ընկած ագին, նոքա անդադար թռչոտումէին աշխատելով բռնել նրան: Իմին ձագը ուրախ թռչոտում էր յետ ու առաջ, ու կարծես հրաւիրում էր շներուն բարձրանալու իւր մօր և խաղալու իւր հետ: Ես սառիկ զգուանք զգայի այս փոքրիկ և ուրախ կատուի սպանութեան դէմ, միայն անհրաժեշտ կարևորութիւնը ստիպեց ինձ անելու այս սպանութիւնը, որովհետև ոչ մի աշխատանքով չկարողայայ ես շներուն յետ կանչելու: Ես արձակեցի հրացանս, վեր առայ սպանած կենդանուն, դցեցի ուսիս վերայ և սկսայ անհանգստութեամբ որոնել այն տեղը, ուր ես թողել էի իմ ձիս:

Ամերիկայում, մանաւանդ ամառը վերջնալոյսը կարճատև է լինում: Պէտք էր շուտպել, ուստի և ես, ինչպէս այս յաճախ է պատահում, շուտով չկարողացայ հասնել նպատակիս, ես երբեմն մոլորվում էի ձանապարհիցս, երբեմն խորասուզվում էի ձահճի մէջ և երբեմն էլ պատառում էի ձեռներս և երեսս փշերով: Վերջապէս մի ժամ մանպալից յետ, ես լսեցի ձիուս ձայնը, որ երևի տաղտկացած միայնութեամբ բարձրաձայն խրխնջում էր: Ջնայելով, որ մինչև տունը մեծ էր ոչ աւելի քան հինգ մղոն և ձանապարհը անվտանգ էր, ես երեք կամ չորս անգամ մոլորվեցայ: Վերջապէս ես վշտեցի սանձերը թողնել ձիուս վրին և յանձնել նրան իւր սեպհական գգացմունքին:

Գրեթէ կէս գիշեր էր, երբ ես հասայ

պարոն կուրտնէի ազարակը: Ես զարմացայ, երբ տեսայ, որ ամէն տեղ կախած էին վառած լապտերներ: Շուտ անցնելով բակը, ես մի սեւից իմացայ այս անսովոր վարմունքի պատճառը: Իմ տանտիրոջ ընտանիքը վաղուց արդէն վերադարձել էր տուն և ըստ սովորութեան ուրը ժամին ընթրիք էր արել: Ինձ մի քանի ժամ անհանգստութեամբ սպասելով կուրտնէն մտածել էր, թէ արդեօք չէ պատահած ինձ որևիցէ դժբաղդութիւն. ուստի և վճռել էր, առնելով իւր հետ իր Սեւերի մեծ մասը երթալ ինձ որոնելու: Ես յանձնեցի ձիս ստրկիս, իսկ ինքս վազեցի դէպի տունը, որ շները արդէն աւետել էին իմ գալուստս:

Իմ հոգատար տանտիրոջ բոլոր ընտանիքը դուրս եկաւ տնից, որ ինձ ողջունէ և ամէնքն էլ միասին ինձ առաջարկեցին հարցեր, թէ ես ուր էի կորել այսպէս ուշ:

„Աւազակներ բռնելու էի գնացել"—պատասխանեցի, մօտենալով իջած քան սպանած են և ես կորցրի միայն երկու շուն. Ահա՛ իմ յաղթանակները:

Իմ տանտէրս շատ զարմացաւ: Նա շատ վարձառու որսորդ էր, ուստի և կրնար ազիներից կարող էր դուշակել կենդանիների մեծութիւնը և իսկոյն խրկից տարուկներուն նոցա մորթերը քերթելու: Սրանից յետ դեռ երկար ժամանակ ինձերի սպանման արկածքս բոլոր շրջականերում մեծ խօսակցութեան առարկայ էր Ճեացել:

Մի քանի օրից յետոյ ես հրաժարական տուի պարոն կուրտնէի և նորա քաղցր ընտանիքին և իմ ձիուս տեղաւորվեցայ շոգենաւի վերայ, որ գնում էր Սէն—Լուի: Այս տեղ աւարտելով մեր գաղթականութեան առևտրական գործերը, ուղիղ ճանապարհով, առանց արկածների, վերադարձայ ես իմ հաւատարիմ Շոշոնների մօտ:

Նէզոնի մահը.

— Լորդ Նելսոնը էր միշտ իմ ամենամեծ հերոսը: Միայն կարելի է նորա համար, որ սորանից յետոյ և ինն տարի առաջ նորա վերջին, իսկ իմ առաջին պատերազմում, ես դադարումէի նորա իշխանութեան ներքոյ, բայց հաւատաւոր այն հիման վերայ, որ ով նորան ճանաչումէր, չէր կարող նորան շատ չյարգել, ուր որ մի անգամ պատահումէր ծանօթանալ նորա հետ, նա չէր կարող նորան չսիրել: Նա ունէր պատասխանութիւնք, ես այդ չեմ ուրանում՝ բայց նոցա ես բոլորովին չեմ յիշում. այդ հարցմունքի մասին, որ ես ասում եմ թէ՝ չեմ յիշում, չէ նշանակում թէ ես միակողմանի հայեացք ունիմ, այլ ուղղակես պատճառն այն է, որ ես չեմ հանդիպած նորա ոչ մի վարմունքին, որ յառաջացած լինի նորա որպիսի և իցէ թուլութիւնից, նորա կեանքի մասին ես ոչինչ չէր գիտեմ արտաքոյ նորա ծառայական գործունէութեան. —ես նորան միայն տեսայ ծովի վերայ: Այն մարդիկը, որոնք չեն պատկանում ծովային նաւատորմիղների ծառայութեանը, որքան որ չարտաւորէին նորա յիշատակը քննելով միւսների նորա բնութեան մասերը, այնուամենայնիւ ծովատորմիղների համար նա միշտ մնում գաղափար և առարկայ պատուոյ:

Ի մանկութենէ անտի ես նշանակուած էի ծովային ծառայութեան մէջ: Հայրս, որ Պլիմուտ քաղաքի քահանայն էր, սիրումէր շատ այս տեսակ ծառայութիւնը և վճռեց տալ իւր միակ որդուն այդ ծառայութեան մէջ: Բարեբաղդաբար և իմ կամքը կատարեալ համապատասխաներ այս ցանկութեանը: Այն ժամանակից սկսեալ ինչպես իմ միտքս է ես երևակայումէի ինձ ծովի վերայ և բնականապես Լորդ Նելսոնը որպես ամենաերևելին մեր ծովատորմիղներից, էր մի հերոս, որի շուրջը պատրաստէին իմ բոլոր երևակայական մտածողութիւնքը: Այն ժամանակ համարեայ իւրաքանչիւր շաբաթ մենք տեղեկանումէինք նոցա յաջողութեանը պատերազմի մէջ և մի անգամ 1798 թուականին լսեցի Աբուկիրի մօտ պատահած հռչակաւոր յաղթութեան համբաւը, որ տարածուեցաւ քաղաքի մէջ. ես այս բանը յիշումեմ ինչպես այժմ, թէև ես այն ժամանակ վեց տարեկանից աւելի չէայի: Ամբողջ Պլիմուտ քաղաքը պուտրաճանումէր. փողոցները վառվումէին հաղարաւոր ճրագներով և սրտառուչ գովասանքները դիւցազներին խօսակցութեան գլխաւոր առարկաները էին:

Հայրս փայփայեց ինձ և ասաց.

— Որդեակ, ապագայում քեզ ևս կարելի է սպասուածն դորա նման յարգանքներ:

Ո՛չ. ինչպես սատիկ ցանկացայ ես այդ բոպէին ուղևորիլ դէպի ծովը, չնայելով իմ քնքոյշ հասակիս, բայց հայրս միշտ ասումէր ինձ, որ նախքան տասն և հինգ տարեկան դառնալս չի թողնիլ ինձ դուրս գալ անից և ես իմանումէի թէ որպէս ազնուական կլինէին բոլոր իմ ջանքերը համոզել հօրս, որպէս զի թոյլ տայ ինձ առաջ ևել վաղ նուիրել իմ անձս ծովագնացութեան: Եւ այսպէս ինձ մնումէր միայն հնազանդել կարիքին, բայց այնուամենայնիւ իմ բոլոր ազատ ժամերս ես անցուցանումէի կամ ծովագնացների հետ խօսակցութեամբ նաւատհանգստում կամ մակոյկների վերայ զբօսանքով:

Սեպտեմբերի մէկին 1805 թուականիդ ես իմ սովորութեանս համաձայն թափառում էի նաւահանգստի մէջ, երբեմն նայելով դիտակիդ, խարխսիով ամրացած շքեղ նաւատորմիղը Սպեռեհեատն նաւակայանում, որին վիճակուած էր անել նանշանաւոր յաղթութիւններից մինը, որ արածէր ծովի վերայ, երբեմն խօսալով նէզոն կապիտանի հետ, որ առաջին ասպիճանաւորն էր յաղթութիւն կոչուած նաւակի նաւատաղներից, որ ապատումէր այնտեղ մակոյկով, երբ յանկարծ բոլոր ծովապնացները առաջնից մինչև յետինը վերթռան ոտքի վերայ և շտապով վերառան պլխարկները: Ես շուռ կայ, ցանկալով իմանալ թէ արդեօք ում են ցոյց տալիս այդ տեսակ յարգանքը և տեսայ մի փոքրիկ ծովապետի նշանագգեստ հագած նիհար մարդ, որը մօտենումէր արագ և ամուր քայլերով: Նորա աջ թեւը կապուած էր կրծքի վերայ, որ ծածկուած էր բոլորովին ասպետական նշաններով և մետալներով: Թէ դա ծովապետ է, շատ երիտասարդ է ասումէի ես ինձ ու ինձ և նորա բոլոր դէմքրութեան վերայ արտայայտումէին առաւել. բարոյական քան ֆիզիքական ոյժեր. բայց նորա հետ միասին նորա մէջ կար այնքան հրամայական և թելադրական յարդութիւն, որ երբ նա պլխարկի վերայ ձեռք դնելով պատասխանեց իւրեան տուած պատուին: ես

բանալ դէպի վեր, ասաց նա ինձ բարու-թեամբ:

Փոքր ահալի է, ձերդ պայծառափայլութիւնը, պատասխանեցի ես, մօտեցնելով ձեռքս գլխարկիս և նայելով երկչոտութեամբ կայմի վերայ:

Ահա ինչ կայ, պարոն, շարունակեց նա դնելով ձեռքը ուսիս.—ես մատղիրեմ բարձրանալ դէպի վեր և այնտեղ կցանկայի պատահել ձեզ:

Ի՞նչ պէտք անէի ես, բայց ասել չէի կարող, ինձ միւսմէր միայն հնազանդելբարձրացայ ես ոչ այնքան մեծ աշխատանքով և վիրաւորեցի ձեռքերս, բայց մինչև վերջապէս հասայ դիտման օթոյին տեղը, որտեղ արդէն ինձ սպասումէր մեծ հսկան 5 րոպէից առաջ:

—Շատ լաւ է, ապրիս, ասաց Նէլսոնը:—Ինչպէս լաւ ձկան են այն մարդիկը, որք երևակայումեն իրրեթէ դժուար և վտանգաւոր է բարձրանալ կայմի վերայ—այդպէս չէ՞, Բոանէր:

Շուտով սորանից յետոյ ես կատարեցի հանձնման ձանապարհորդութիւն պակաս բարեպատեհ միջոցներում: Չկատարելով նաւապետ Գարդի հրամանը ուղարկուեցայ նորանից պատժելու համար կայմի վերայ: Փոքր ժամանակ անցնելուց յետոյ ծովապետը դուրս եկաւ նաւի վերին տախտակամածը և իւր անփոխոխ սովորութեամբ նայեց խկոյն կայմի բարձրութեան վերայ, որոյ ժամանակ իհարկէ տեսաւ ինձ նստած կայմի վերայ այնպէս, ինչպէս թռչունը ձիւղի վերայ: Նա իմացաւ պատճառը և լսելով որ ես արդէն մի քանի ժամ անցեմ կայրել այդ դրութեան մէջ, հրամայեց կանչել ինձ ներքև: Հազիւ կարողացայ ես հասանել մինչև տախտակամածը երբ նա կանչեց ինձ իւր մօտ:

—Երիտասարդ, մատներեցէ՛ք միշտ ևրեք բան, ասաց նա ինձ զօրաւոր և խիստ դէմքով, երբ մօտեցայ ես նորան փոքր վախեցած, վրդովուած և դողալով մինչև ոսկորներս.—նախ և առաջ կատարեցէ՛ք բոլոր հրամանները առանց մի որ և իցէ փորձառնութեան. երկրորդ նայեցէք այն մարդոյ վերայ ինչպէս Թշնամւոյ վերայ, որ կսկսէ խօսել վատ ձեր Թագաւորի կամ հայրենիքի վերայ, երրորդ, սնուցէք ատելութիւն դէպի Ֆրանսիացիքը, նոյն իսկ սատանայից առաւել:

Ինձ տեղերը կպակասէին, եթէ ես կամենայի Թուել այստեղ բոլոր եղանակները, որոնցով այս մեծ մարդը կապուաէր իւրեան հետ իւր ստորադրեալներու բայց ես ձեռնամուխ եղայ նկարագրել Լորդ Նէլսոնին ոչ որպէս մի մանաւոր անձն, այլ որպէս ընդհանուր անձն և այն ևս նորա կեանքի վերջին օրերում:

Լորդ Նէլսոնի ծննդեան օրը, երբ նա դառաւ 47 տարեկան մենք հասանք մինչև կատէսը, որտեղ ծածկուածէին դաշնակից իսպանական և Ֆրանսիական նաւատորմիղները: Ամբողջ երկու շաբաթ մենք լրտեսութիւն էինք անում այս տեղերի մօտ այնու յայտով, որ Թշնամին վերջապէս դուրս կը-գայ պատերազմելու միևնոյն հետ, բայց վէնէռվը լսելով, որ ինքը Նէլսոնն է առաջնորդում պատերազմական նաւատորմիղի վերայ չկամեցաւ պատերազմել նորա հետ: Մի քանի մարդիկ կայմի բարձրութիւնից զննեցին Թշնամեաց նաւատորմիղը վերջապէս մենք յայտնեցանք, Ֆրանսիացիք և իսպանացիք չէին կամենում իւրեանց մահուամբ բանականութիւն տալ մեզ, բայց այս տեսակ ցածութեան համար մենք դրոշմեցինք նոցա մի խայտառակ մականուամբ. անուանելով նոցա յայտնի երկչոտներ: Միայն Հոկտեմբերի 19ին Նէօտ ցալինդոսը իւր կարգին համաձայն նշանակ ած էր նշանները. զննելու համար, յայտնեց, որ ափին մօտեցած Մարս նաւը յայտնում Թշնամեաց նաւատորմի ելքը նահանգստից: Բայց կռվիլ Թշնամեաց հետ այն մի և նոյն տեղում, որտեղ մենք կանգնած էինք, մեր ծովապետի կամաց հակառակ էր: Նա շատ լաւ էր իմանում, որ ծովի վերայ ոչ պակաս ինչպէս և ցամաքի վերայ, պատերազմողների երկիւղ դրութիւնը վրա-ռում գործքի յաջողութիւնը. նորա հրամանով բոլոր պատերազմական նաւատորմիղը խարխափ բարձրացրեց և ուղևորեցաւ դէպի Հարաւ Արևելեան կողմը ցածջոլակ հողմի ժամանակ մենք օրինաւոր կերպիւ անցանք Ջիբրալտարի նեղուցը և միշտ մեր ուղղութիւնը դարձնելով դէպի Արևելք մենք շուտով տեսանք Տրաֆալգարա անուանեալ հրուանդանը. այնտեղ մենք կանգնեցինք և սկսանք սպասել Թշնամեաց նաւատորմիղին: Սակաւ առ սակաւ և փառահեղ կերպիւ հորիզոնի կողքից երևեցան նաւերը մինը միւսի ետևից: Հարաւային հողմը չէր Թոյլ տալիս մեզ յարձակել իսկոյն Թշնամւոյ վերայ, նոյնպէս և նորան չէր Թողում մօտենալ մեզ և մենք ձանձրալի անդործութեան մէջ մնայինք էլի մի օր: Ահագին նաւերը օրօրուելով և տատանուելով մի կողմից միւս կողմ, յաճախ մէկ տեղից միւս տեղն էին գնում, կարծես Թէ գտնվուելին այնպէս սաստիկ ապրկեալ ըզգացմունքի հոսման տակ, որ չէին կարող մնալ մի տեղ, այնինչ երբ մակոյկների անթիւ բազմութիւնը չէր դադարում մեզ ապաւինվելու:

Իմ համար նշանաւոր օրում այսինքն Հոկտեմբերի 21ին ես նստած էի Լորդ Նէլսոնի մօտ նախաճաշիկի վերայ, նա ըստ եռևութին համարուեր ինձ քանի մի մասամբ իւր հովանաւորութեան ներքոյ, որովհետև իմ ծառայութիւն մտնելուս միակ պատճառն էր նա: Նաւապետ Գարդը և միսաեր Պոստը, ծովապետի տեղապահները նախաճաշիկ էին անում մեր հետ միասին

Գարդ, ասաց Լորդ Նէլսոնը մի շաբունակ լռութիւնից յետոյ, որոյ ժամանակ մեր բոլոր մարքերը ուղղուածէին դէպի մեզ բաւով միակ առարկան—տատպիկայ պատերազմը: Գարդ ես միշտ սնուցանումի մըտքումս մի օտարոտի համոզմունք, որ Հոկտեմբերի 21ը կլինի ինձ համար ամենափառաւոր յաղթութեան օրերից մինը: Իմ ընտանեաց մէջ այդ մի երևելի տարեդարձ է. Հոկտեմբերի 21ին իմ հօրեղբայր նաւապետ Սպլինդը՝ որոյ հշխանութեան տակ կատարեցի իմ առաջին նաւարկութիւնս, խորտակեց միայն իմ և երկու նաւի օգնակցութեամբ Ֆրանսիական պատերազմական նաւատորմիղը, որ բազկացածէր եօթն նաւերից: Աղօթումեմ առ Աստուած, որպէս պի հողմը ուղղութիւնը փոխէր և կատարուեր իմ դուշակութիւնս:

Հազիւ Թէ նա կարողացաւ արտասանել այս խօսքերը, երբ մտաւ սենեակը կրտսեր Լէյտենանտը և իմաց տուէց ծովա-

պահին, որ հողմը փոխեց իւր ուղղութիւնը և սկսաւ փչել արեւմուտքից:

Լորդ Նէլսոնը արագ վեր կացաւ իւր տեղից և գնաց պրացի սենեակը, որտեղ նա ինչպէս ես յետոյ լսեցի, գրեց հետևեալ ապօրէն քը:

„Շնորհիւր ամենակարող Աստուած իմ հայրենիքիս մեծ և փառաւոր յաղթութիւն բոլոր Եւրոպայի բարօրութեան համար, որ չի արատաւորել մեր միջոցը ոչ մէկին անարժան վարմունքը, և թող լինի այս մարդասիրութիւնը արած յաղթութիւնից յետոյ, որ հանուիմ մինչև սահմանը բրիտանական նաւատորմիղի, ինձ և իմ կեանքս յանձնում եմ իմ Սահզծողիս և թող իմ նորա օրհնութիւնը իմ կարողութեանս վերայ հաւատարմութեամբ ծառայել իմ հայրենի երկրին. ես նորան յանձնում եմ ինձ և իմ արդար գործը, որ տուած է իմ պահպանութեան համար:Ամէն, ամէն, ամէն„

Իսկոյն սորանից յետոյ, գուցս եկաւ նա տախտակամածի վերայ և հրամայեց նշան տալ, որից յետոյ Լորդ Գալլինգուորը և նաւու բոլոր հրամանատարները հաւաքուեցան նորա շուրջը, նոցա հետ միասին փոխուեցաւ նա սենեակում և յայտնեց նոցա պատերազմի պլանը: Երբ մեծ մասը նաւերի հրաժարձան իւրեանց նաւերը Նէլսոնը հրամայեց տուաւ ընդ առաջ գնալ, երկու մասը բաժանելով իւր պատերազմական նաւատորմիղը: Նա ինքը ցաղթութեան նաւի վերայ տասն և չորս նաւի գլուխն էր կազմում, որը գնում էին հողմային կողմից:Ֆրանսիական ծովակալը Վիլլնէօվը կարգեց երեսներիք նաւերից բաղկացնել իւր պատերազմական նաւատորմիղը, երկու կարգ և ապստում էր մեր գուշակողական լուրեանը: Սնդիկ կերպիւ և մեք շտապեցինք առաջ և մեր նաւատորմղի երկու գալարեալ շարքերը թուում էր թէ ենթարկուում էին յուսահատական փախստեան:

Լորդ Նէլսոնը կասեցնում էր անպատճառ որ ինքն անէ յարձակումն, բայց նորան ասացին՝ որ չենթարկուի թշնամեաց առաջին հրացանաձգութեան, իջնելով իւրեան շրջապատողների սովորական լանգրանաց, նա հրաման տուաւ երկու նաւերին. Էվիաթանին և Համարձակին շրջել և կանգնել առաջ. բայց նա ինքը այնպէս սաստիկ ցանկանում էր առաջին անգամ պատերազմը, որ ոչ միայն չէր պակասեցնում նաւատորմղի ընթացքը, այլև հրամայում առագաստներ աւելցնել • Էվիաթանը և Համարձակը իզուր աշխատում էին աքսորել նորան և անհաւատալի ջանքերից յետոյ ըստիպուած էին ճնալ յետ իւրեանց առաջին տեղերում:

Որպիսի անվերջ երկայնութիւն էր թուում մեզ բոլորիս եօթն մղոն հեռաւորութիւնը որ բաժանում էր մեզ մեր թշնամուց. ներկայ գտնուողներից շատերին արդէն շատ էր պատահել զբաղուած լինել գործում, նոքա էս սպասում էին անտարբեր վճռական րոպէին: Իսկ միւսերը, որոնց թուում և ես, դեռ ևս ոչ մի ժամանակ վառուղի հոտ չէին յառել և դոյա սրտում ծածկաբար մուտ գործեց գաղանի երկիւղը որ նոքա ամէն կերպ աշխատում էին խափանել: Ես յիշում եմ, որ երբ անպարտելի ակարութիւնը պատեց ինձ, յանկարծ հատեցայ չհաւատալով իմ աչքերին, ես ամէնից ոյժից, կամքից և քաջութիւնից, երբ վերադարձան իմ ոգւոյ աչքաւժութիւնը,որ ազդում և շնորհում էր ներկայ գտնուողներից իւրաքանչիւրին տասն անգամ առաւել հանդգնակութիւն, որոյ նմանը ոչ մի ժամանակ նա չէր տեսել իր կեանքում:

Ես կանգնած էի ահով մակոյկի վերայ յինւած դրութեամբ, երբ տեսայ, որ Լորդ Նէլսոնը կանչեց իւր մօտ նէօզ կալինգուտին: Այս դէպքը, որ ես նկատեցի պարմացմամբ կամ համարեայ երկիւղով, պատճառ եղան այդ անցքի տպաւորութեանը մաքիս մէջ, որոյ ժամանակ նէօզ կալինգուտը լսում էր իւրեան տուած պատուէրը: Այս րոպէում պատահած մանր հանգամանքները տպաւորեցան իմ մտքում.չը նայելով որ այդ անցքից յետոյ պատահած երևելի գէպքերը պէտք որ մոռացնել տային միւս մնացեալները:

Մի րոպէից յետոյ մեր ծովակալի վերջին պատուէրը հաղորդեցաւ բոլոր պինւոբական նաւատորմղին, Անգղիան յոյս ունէր որ ամեն մին ձեռնից կկատարէ իւր պարտքը: Մեռեալ լռութիւնը այս նշանից յետոյ տևեց մի րոպէ էս, բայց սորանից յետոյ բոլոր քսանևվեց նաւերի շարակարգի մէջ լսուեցաւ միաձայն, տատանուող և որոտանման խրախուսական ձայն: Երբէք ես այդ չեմ մոռանալ: Բայց ինչ վերաբերում է ինձ, իմ զգացմունքներս ոչ մի բանով չէին արտայայտում, ես արդարև կարծես նորոգուեցայ կեանքով:

Ես երդուեցի, որ այնու ամենայնիւ մի մարդ (ես համարուում էի չափահաս մարդ) կկատարէ իւր պարտքը, և տանջող երկիւղը անհետացաւ աննկատելի կերպիւ, որպէս զի այլևս չյափշտակէ ինձ:

—Իսկ ես գոհեմ Աստուծուց այս մեծ գէպքի համար կատարել իւր պարտքը, աւելցրեց մեր հերոսը:

Երբ վերջին խրախուսական ձայնը անհետացաւ տարածութեան մէջ, Նէլսոնը կանչեց ինձ և պատուիրեց լինել իւր մօտ նաւերին իւր պատուէրները հաղորդելու համար: Այս բանը ինձ չափազանց ուրախացրեց, ես հաւատացած էի, որ որտեղ էր նա անանձնական [illegible] զգաստութեան միւսերից:

Շուտով մօտեցան Նէլսոնին ծովակալը և միւս նաւի նաւապետ Բլէյկուտը և խնդրուեցին նորան, որ ազատէ վտանգից նոցա նաւերի կարգը, որ նոքա չենթարկուին ֆրանսիական նաւերի ամբաձգութեանը: Երևում էր, որ Լորդ Նէլսոնը շատ զժգոհ էր նոցա խնդիրը լսելով:

—Ոչ մի կերպ համաձայն չեմ, ազատակից նա սաստկութեամբ.—ես արժանի եմ եղել նորան պատուով, պատուով ևս կը բռնեմ:

Ես յիշում եմ, որ ամեն րոպէ ես ըզգում էի, որ նորա անվհերութիւնը բերեց նորա վերայ առաւել շատ ուշադրութիւն, քան նորա ասպետական նշանը պատող թանգագին քարերի շողշողիւնը:

Ինձ յաձախ զարմանալի էր թուում թէ ինչպէս կարողեն միատեմի նկարագրել ծովային պատերազմի բոլոր մանրամասն պատահմունքները, նորա ամբողջ նաւատորմիղը ծայրից մինչև վերջը առ հասարակ ծածկուում էր ծուխի ամպի մէջ, այնպէս որ անօգուտ կլինէին քո գտնուած նաւի ներսի գծագրութեան մէջ մի որ և իցէ բան նկատելու բոլոր ջանքերը: Այսպէս ուրեմն ես

պարտք չեմ համարում ինձ պատմել մի առումի երկուշինուորական նաւատորմղի վերայ պատահած բոլոր զորձողութիւնները, բայց սիայն կրաւականանամ յաղթութեան նաւի վերայ պատահած անցքերով և նորանով, թէ ինչ բաները զոցանից վերաբերուեն երևելի հսկային, որոց մօտ կանգնած էի ես:

Առաջին հրացանաձգութիւնը լսուեցաւ 12 ժամուայ սկզբում:

Այն նաւը, որի առաջնորդն էր Լորդ կալլինկուտը սկսեց պատերազմը, նա ներս մտաւ Թշնամեաց նաւերի կարգը, պարպելով իւր գինուց բոլոր զօրութիւնը երբեմն աջ կողմից երբեմն ձախ կողմից Թշնամեաց նաւատորմիղի մէջ Իսպանական Սանտա—Անա նա անուանեալ նաւի վերայ որ ժամանակագրութիւններում յիշուած ծովային քաջութեան անվեհեր գործերից միևն է համարվում:

Յաղթութիւնը չը հեռացաւ կալլինկուտի աջակցայ առաջին անգամ սպանողը էր Ծովակալի առենադպիր միստեր Սոտոը: Յիշողութիւնս փոքր անկատար լինելով կասկածանաց տակ է ձգում այն բանը թէ արդեօք իսկ և իսկ որ նաւի հետ էր մեր կռիւը այն ժամանակ. բայց կարծես մենք կարդով կռվում էինք երեսունևերեք Ծովագնացների հետ: Միքանիսը խորասոյզ եղաւ Ծովի յատակում, միւսներին մենք գերի առինք և մեծ մասին մենք ի փախուստ դարձուցինք: Ինձ անհաւատալի է թւում, որ պատերազմի բոլոր ժամանակամիջոցը բաղկանում էր առաւել քան մի ժամ և մի քառորդ: Այս րոպէները ինձ թւում էին իբրև օրեր, որովհետև թէև ես իմ զգացմունքներիս հաշիւ չէի տալիս, բայց մուքը կերպիւ խոստովանում էի, որ նոցանից իւրաքանչիւրը կարող է լինել իմ կեանքիս վերջին րոպէն:

Մի ժամուայ մօտերը ղէնի ձայնն, երբ մենք նոր էինք սկսել կռուիլ զրոյների հետ և երբ Լորդ Նէլսոնը տալիս էր ինձ մի պատուէր. երբ մի գնդակ Ֆրանսիական նաւից դիպաւ ոտքիս և ես ընկայ: Ես զգում էի մի ձեռի մերձենալը առ իս, որ քնքոյշ նախազգուշութեամբ աշխատում էր բարձրացընել ինձ, ինձ պաշտպանեց Ծովապետ Նէլսոնը: Ես կարողութիւնիցս դուրս զօրութիւն գործ դրի և վերկացայ ոտիս վերայ:

—Ո՜հ, երիտասարդ, ասաց նա իւր սքանչելի ժպիտով, այդ գնդակը քեզ համար նշանակուած չէր:

Հասկացայ ես նորա միտքը: Ես իսկ և իսկ կանգնած էի նորա և գրոշի մէջ: Եթէ միայն համարձակուէի, ես կրնկնէի նորա ոտքերը և կխնդրէի ի սէր Իւրեան, ի սէր հայրենեաց ի սէր մեր բոլորի թաղուցանել այն փայլուն աստղերը, որք սպառնում էին նորան մահով: Նա ունէր այնպիսի մի փառահեղ դէմք, որ կարծես զգում էր, որ մի քանի րոպէ անցնելուց յետոյ մահու հարուած կատանայ:

Րոպէական հաստատամտութիւնը, որ պահպանում էր կամքի զօրութեամբը յանկարծ թողեց ինձ և ես ընկայ ատոտա-կամածի վերայ, արիւնով լցուած: Լորդ Նէլսոնը կանչեց նաւաստիներին և հրամայեց տանել ինձ ներքև:

Եօթն րոպէից յետոյ, երբ վիրաբոյժ [illegible] Հանեց ինձնից գնդակը, ես լսեցի դռների ետևէ մի շաչ, բայց այնպիսի ահալի և չարագուշակ ղրոյց, որ էնայելով պատերազմի աղմկին ես լսում էի:

— Յետ քաշուիր, Բիլլ. ղրոյշ, հաւասար տարէք, ահա այսպէս:

Եւ երկու նաւաստիք ներս մտան բերելով մի մարմին, որի վերին մասը ծածկած էր Թաշկինակով. ետևից գնում էր մեր նաւապետը:

Ես իսկոյն ճանաչեցի այդ մարդոց վստահելութիւնը և բռնելով բժշկի ձեռքից սայի նորան արագութեամբ, թէև դժուարութեամբ գոյ իմ միտքս յայտնելու համար խօսքեր, որք յանկարծ ծագեցան իմ մտքում:

— Այն տեղ,—ասէր այնտեղ գնացէք, օգնեցէք նորան—նա վիրաւորուած է:

Բժիշկը, իմ յանկարծակի շփոթմունքից զարմացած, կատարեց իմ խնդիրս. մերձեցաւ վիրաւորուածին, վեր առաւ նորա երեսից Թաշկինակը և մենք ճանաչեցինք Լորդ Նէլսոնին:

Համոզուելով, որ երկիւղս իրաւացի էր ես վախով արագ կերպիւ բարձրացայ, բայց տկարութիւնս յաղթեց ինձ և ես ընկայ ներքև և սկսայ նկատել ձգտեալ ուշադրութեամբ միւս պատահած անցքերն: Որպէս յանկարծ ես իմանալ թէ արդեօք վտանգաւոր է նորա վերքը թէ ոչ, բայց ոչ մի կերպ չկարողացայ իմանալ բժշկի նաւապետի հետ ունեցած խօսակցութիւնը. նորա խօսում էին շշնջմամբ, և հենց այս ցածր շշնջիւնն էր, որ ինձ թւում էր սոսկալի:

Վերջապէս Լորդ Նէլսոնը նշանով հեռացրեց իրանից բժշկին, որ վերադարձաւ ինձ մօտ:

—Արդեօք մահու չափ վիրաւորուած է, տէր. հարցրի ես աղօթարար ձայնով:—Ես ոչընչի մի խօսք անգամ չեմ ասիլ: Մի թէ նա պէտք է մեռնի:

Հետևակ.

ՅՈՒՅԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Լրագրիս ստացողների մեծագոյն մասը և տակաւին բաժանորդութեան գինը չեն վճարել, ուստի նաև անցեալ 1870 տարեկանի համար, ուստի ստիպուած ենք զանուում յիշեցնել իւրեանց պարտաւորութիւնը և խնդրել, որ բարեհաճեն վճարել "Օրագրիս" բաժանողին ու ընդունել ստացագիր, խմբագրիս ստորագրութեամբ:

Հրատարակիչ Հ. ԷՆՓԻԱՃԵԱՆՑ
Խմբագիր Պ. ՍԻՄԷՕՆԵԱՆՑ
ի տպարանի Հ. ԷՆՓԻԱՃԵԱՆՑ և ընկ.
ի տան Զիթախեանց.

ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ 18-го ДЕКАБРЯ 1871
ТИФЛИСЪ